



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Պետարքունիքի մարզի Երանոս համայնք
ՀՀ, Պետարքունիքի մարզ, գ.Երանոս, (0262) 6-00-73, (093) 33-07-37
yeranos.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՅԻՍԻ 2015թվականի N 17-Ա

ԵՐԱՆՈՍ գՅՈՒՂԻ 13-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 22 ՀԱՍՑԵՈՒՄ գՅՆՎՈՂ 05-033-0006-0001
ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.1498 ՀԵԿՏԱՐ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ
ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՄԱՐՏԻԿ գԵՎՈՐԳԻ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՍ
ԿԱՌՈՒՑԱԾ 190.33 ՔԱՌԱԿՈՒՄԻ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն և «Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, անհատական բնակելի տների, այգետնակների (ամառանոցների) և դրանց կից շինությունների, առանձին կանգնած հասարակական ու արտադրական նշանակության շինությունների, բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հասարակական ու արտադրական նշանակության շինությունների տեղադրության (տարածագնահատման գոտիականության) գործակիցները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշումներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարին հասցեագրված հողամասի համասեփականատերեր՝ Մարտիկ Գևորգի Ամիրխանյանի և Գյուլնարա Գուրգենի Ամիրխանյանի դիմումը՝

Որոշում եմ

1. Երանոս գյուղի 13-րդ փողոցի թիվ 22 հասցեում գտնվող 05-033-0006-0001 ծածկագրով 0.1498 հեկտար տնամերձ հողամասի վրա սեփականատեր Մարտիկ Գևորգի Ամիրխանյանի կողմից 2014 թվականին ինքնական կառուցած մեկ հարկանի բնակելի տունը՝ արտաքին չափեր 143.48 քառակուսի մետր (ներքին չափերը՝ 111.69 քառակուսի մետր), և բնակելի տան նկուղը՝ 46.85 քառակուսի մետր ներքին չափերով կառույցը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որ կառույցի պահպանումը չի

խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2.Ինքնական շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ ապահովելու իրավունք, օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչել օրինական:

3.Ինքնական շինությունների օրինականացման համար սահմանված վճարը համայնքի բյուջե կազմում է 131327 (մեկ հարյուր երեսունմեկ հազար երեքհարյուր քսանյոթ)ՀՀ դրամ($143.48+46.85=190.33 \times 10000 \times 0.069=131327$):

4.Սույն որոշման ընդունելու օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում համայնքի բյուջե չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ԱՊԵՏՆԱԿ ՄՈՎՍԵՍՅԱՆ

20 15 թ մայիսի 12
գ.Երանոս